ԿԱՐԾԻՔ

Շաքե Զավենի Մենկեչյանի «Արաբական Միացեալ Էմիրութիւններու հայ համայնքի հասարակական-քաղաքական կեանքը 1970-ական թուականներէն մինչեւ մեր օրերը» թեմայով Է.00.01 - «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսության վերաբերյալ

Ծոցի արաբական երկրների, մասնավորապես՝ Միացյալ Արաբական Էմիրությունների (ԱՄԷ) առաջընթացը պատմական տարբեր փուլերում զգալի հետաքրքրություն է առաջացրել տարբեր ժողովուրդների, այդ թվում՝ հայերի շրջանում: Դեպի ԱՄԷ հայերի շարունակական տեղաշարժն և տեղում հայ համայնքի ձևավորումն ու հետագա աճը հրամայական են դարձնում սփյուռքյան այս նորագույն համայնքի պատմության և զարգացման համապարփակ գիտական ուսումնասիրությունը:

Ատենախոսության թեմայի արդիականությունն ու գիտական նշանակությունը պայմանավորված են մի քանի հիմնարար գործոններով.

- Ի տարբերություն հայկական սփյուռքի ավանդական այլ համայնքների, որոնց մեծ մասի վերաբերյալ առկա են ծավալուն հետազոտություններ, ԱՄԷ-ի վերջին 45 տարիների ընթացքում ձևավորված հայ համայնքի հասարակական-քաղաքական, կրթամշակութային կյանքի մասին համապարփակ գիտական ուսումնասիրությունը ցարդ բացակայում էր պատմագիտության մեջ: Սույն աշխատանքը միտված է լրացնելու այդ բացը:
- Համաշխարհայնացման արդի պայմաններում ԱՄԷ-ի հայ համայնքն այնպիսի կառույց է, որն առավել ենթակա է պարբերական և արագ կերպափոխումների: Այդ փոփոխությունների արձանագրումն ու անցյալ և ներկա գործընթացների պատճառահետևանքային կապերի բացահայտումը թույլ կտան ոչ միայն հստակեցնել համայնքի ներկա պատկերը, այլև կանխատեսել ապագա

զարգացումներն ու նպաստել համայնքային կյանքին առնչվող կշռադատված որոշումների կայացմանը:

- Ատենախոսությունը ընթերցող հանրությանն է ներկայացնում ընդամենը մի քանի տասնամյակ առաջ ձևավորված պետության մեջ հայերի հաստատման, համայնքային կառույցների ու ղեկավարման մեխանիզմների կայացման յուրօրինակ գործընթացը: Աշխատանքն ըստ էության վավերագրում է համայնքի գործունեությունը:

Այսպիսով, 1970-ական թվականներից մինչև մեր օրերն ընկած ժամանակահատվածում ԱՄԷ-ի հայ համայնքի պատմության քննությունը արդիական է, գիտականորեն հիմնավորված և ունի ինչպես տեսական, այնպես էլ գործնական-կիրառական մեծ նշանակություն:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, 4 գլխից (իրենց համապատասխան ենթագլուխներով), եզրակացությունից, առաջարկություններից, օգտագործված աղբյուրների ու գրականության ցանկից, ինչպես նաև հավելվածներից: Աշխատանքի ընդհանուր ծավալը-190 համակարգչային էջ է, որից 42-ը հավելվածներն են:

Ատենախոսությունն աչքի է ընկնում հարուստ, բազմաշերտ և արժանահավատ աղբյուրագիտական հենքով ու մասնագիտական գրականության տեսությամբ, ինչը հեղինակին թույլ է տվել հիմնախնդիրը քննել համակողմանիորեն:

Առաջին գլուխը («Հայկական համայնքի ձեւաւորման եւ կայացման գործընթացը ԱՄԷ-ի մէջ») քննում է երկրի սահմանադրական ու իրավական դաշտը, որն ապահովում է կրոնական հանդուրժողականություն և ազատություն ոչ մահմեդական փոքրամասնությունների համար: Հեղինակը ներկայացնում է հայերի ներկայությունը տարածաշրջանում (մասնավորապես՝ հայերի առնչությունները միջնադարյան Զուլֆար/Ռաս ալ-Խայմահ նավահանգստի հետ), ինչպես նաև 1950-ականներից սկսված նավթային բումով պայմանավորված ժամանակակից համայնքի ձևավորումը, տեղաշարժերը և «Ոսկե վիզա»-ի քաղաքականության ազդեցությունը: Առանձնահատուկ ընդգծվում է Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսության դերը համայնքային կյանքի հոգևոր և կազմակերպչական հիմքերի դրման գործում:

Երկրորդ գլուխը («ԱՄԷ-ի հայ համայնքի կառուցուածքը եւ հասարակաքաղաքական ու մշակութային կեանքի առանձնայատկութիւնները») անդրադառնում է համայնքի հաստատութենական պատկերին: 1980 թվականը համարվում է համայնքի պաշտոնական հիմնադրման տարի, երբ նշանակվեցին Շարժա-Դուբայի և Աբու Դաբիի առաջին Ազգային վարչությունները: Կարևորագույն իրադարձություն էր 1996 թ. Շարժայի կառավարչի կողմից եկեղեցաշինության համար հողատարածքի հատկացումը, ինչը բերեց համայնքի պաշտոնական ճանաչմանը: Քանի որ ԱՄԷ-ում ավանդական քաղաքական-հասարակական կազմակերպություններն արգելված են, մշակութային պահպանության առաքելությունը ստանձնեցին տեղական մշակութային ընկերակցությունները և համահայկական կառույցները (ՀՕՄ, Համազգային), որոնք ապահովում են ազգային տեսանելիությունը տեղական փառատոներում:

Երրորդ գլուխը («ԱՄԷ–ի հայ համայնքի դերը ՀՀ-ԱՄԷ յարաբերութիւններուն մէջ») վերլուծում է համայնքի դիվանագիտական և հայրենասիրական գործունեությունը: Ցույց է տրվում, որ տեղի հայությունը վճռորոշ նյութական և կազմակերպչական աջակցություն է ցուցաբերել Աբու Դաբիում ՀՀ դեսպանության հիմնադրմանը: Համայնքը կամուրջ է հանդիսացել երկկողմ բարձր մակարդակի տնտեսական ու մշակութային կապերի (օրինակ՝ Շարժայի շեյխի հովանավորությամբ Հաղարծնի վանքի վերականգնումը) համար: Բացի այդ, համայնքն աչքի է ընկել Հայաստանին, Արցախին (Արցախում «Նոր Կիլիկիա» բնակավայրի կառուցումը) և վտանգված սիրիահայերին ուղղված հետևողական մարդասիրական օգնությամբ:

Չորրորդ գլուխը («ԱՄԷ-ի հայ համայնքի զարգացման եւ ազգային ինքնութեան պահպանութեան հիմնահարցերը») նվիրված է հայապահպանության արդի մարտահրավերներին: Քննարկվում են միօրյա վարժարանների գործունեությունը, մասնագետ մանկավարժների և պետական ճանաչման բացակայությունը: Առանձին ուշադրություն է դարձվում լրատվամիջոցների դերին. տպագիր մամուլի կարճատև փորձերից հետո համայնքն անցել է թվային հարթակների (օրինակ՝ «Ազատ հայ» կայք, «Ռադիո ԱՅԳ», emahay.com), որոնք հանդիսանում են տեղեկատվության հիմնական աղբյուրը:

Եզրակացության մեջ հեղինակն ամփոփում է ուսումնասիրության արդյունքները՝ փաստելով, որ ԱՄԷ-ի հայ համայնքը վերջին տասնամյակներում որակական անցում է կատարել հիմնարար կառույցների ստեղծումից դեպի կազմակերպված մշակութային և հոգևոր զարգացման ավելի բարձր փուլ:

Ատենախոսության վերջում հեղինակը ներկայացրել է ԱՄԷ-ի հայ համայնքի և հայրենիք-սփյուռք հարաբերությունների զարգացմանն ուղղված մի շարք առաջարկներ:

Ներկայացված աշխատանքի գիտական նորույթն ամենից առաջ այն է, որ հեղինակն առաջին անգամ պատմագիտության մեջ իրականացրել է Միացյալ Արաբական Էմիրությունների հայ համայնքի պատմության ողջ ընթացքը, կառուցվածքն ու հասարակական-քաղաքական կյանքի բոլոր ոլորտներն ընդգրկող համակարգված և համապարփակ հետազոտություն: Քանի որ նախկինում առկա ուսումնասիրությունները կրել են մասնակի կամ առանձին դրվագներին վերաբերող բնույթ, ատենախոսությունն իր ամբողջության մեջ հանդիսանում է ինքնուրույն և արժեքավոր նորույթ սփյուռքագիտության և արդի հայոց պատմության բնագավառում:

Մասնավորապես, որպես գիտական նորույթ պետք է արձանագրել աշխատանքի հետևյալ արդյունքները.

- Առաջին անգամ գիտականորեն վերլուծվել և ամբողջացվել են ԱՄԷ-ում հայերի հաստատման նախադրյալները, ներհամայնքային կյանքի և ազգային-հասարակական կառույցների ձևավորման ու կայացման փուլերը:
- Ատենախոսության մեջ մանրամասն քննության են առնվել Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության տեղական թեմի հիմնադրման, եկեղեցական կյանքի կազմակերպման պատմությունն ու դրա ունեցած առանցքային դերը համայնքի համախմբման գործում:
- Հեղինակին հաջողվել է վեր հանել դեպի ԱՄԷ հայերի ներգաղթի դրդապատճառները, առանձնահատկությունները, ինչպես նաև արտագաղթի շարժառիթներն ու դրանց ժողովրդագրական ազդեցությունը համայնքի պատկերի վրա:

- Աշխատանքում խորությամբ վերլուծված են ԱՄԷ հայության կրթամշակութային կյանքի կազմակերպման ուղիները, կրթօջախների դերն ու էթնիկ ինքնության պահպանության հիմնախնդիրները համաշխարհայնացման արդի մարտահրավերների համատեքստում:

Ատենախոսության մեջ առկա են որոշակի բացթողումներ և հետագայում աշխատանքը որպես մենագրություն հրապարակելու դեպքում, շտկելի դրվագներ, որոնցից հարկ ենք համարում նշել հետևյալը.

1. Ատենախոսության ներածական մասում (էջ 7) հեղինակն արձանագրում է, որ հետազոտության համար «հիմք ծառայած են սփիւռքի եւ ինքնութեան առընչուող տեսութիւնները»: Սակայն, աշխատանքի բովանդակային շարադրանքում և համայնքային կառույցների ու միգրացիոն հոսքերի վերլուծության մեջ այդ տեսական հայեցակարգերի գործնական կիրառումն ու անդրադարձը, ըստ էության, բացակայում են: Այս տեսանկյունից աշխատանքը խիստ շահեկան կլիներ, եթե հեղինակը համայնքի ձևավորման և «նոր սփյուռքի» փոխակերպումների քննությունը խարսխեր սփյուռքագիտության ճանաչված տեսաբանների, օրինակ, Խաչիկ Թոլոյանի («The Nation-State and Its Others: In Lieu of a Preface» (1991) "Diaspora: A Journal of Transnational Studies", 1(1), pp. 3-7, Elites and Institutions in the Armenian Transnation (2000), "Diaspora: A Journal of Transnational Studies", 9(1), 107–136, Ջոն Սրմստրոնգի, (Mobilized and Proletarian Diasporas (1976), American Political Science Review, 70, No. 2, pp. 393-408), Գաբրիել Շեֆերի (A New Field of Study: Modern Diasporas in International Politics, (1986), "Modern Diasporas in International Politics", London & Sydny, pp. 1-15), Ռոքեր Քոնների (The Impact of Homelands Upon Disaporas, "Modern Diasporas in International Politics", London & Sydny, pp. 16-46) և այլոց առաջ քաշած դրույթների վրա: Ի դեպ, ԵՊՀ-ն թարգմանաբար վերահրատարակել է նշված և հեղինակների՝ սփյուռքների տեսությունների վերաբերյալ նշանակալի անգլիալեզու հոդվածներ (Սփյուռքագիտություն. Քննական անթոլոգիա, Երևան, ԵՊՀ հրատ., 2022, 586 էջ:)

2. Ատենախոսության հեղինակը զարմանալիորեն չի օգտագործել 2024 թ. Հայկազյան համալսարանի կողմից Բեյրութում հրատարակված "ԾՈՑԻ ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՀԱՅԵՐԸ" գիտաժողովի (6-7 Դեկտեմբեր - 2022) նյութերի ժողովածուում (Բեյրութ, 2024) ընդգրկված աշխատանքի համար մի շարք շահեկան հոդվածներ, օրինակ՝ Հրաձին Վարդանյանի «Սփիւռքահայութեան հետ մշակութային կապի կոմիտէն եւ Ծոցի արաբական երկրների հայօճախները (Քուէյթ, ԱՄԷ), (1964-2020)» (էջ 307-322), Սոնա Տոնիկյանի և Էլիզ Գևորգյանի համատեղ «Հայաստանի Հանրապետութիւն-Ծոցի արաբական երկրներ.. միջպետական յարաբերութիւններ» (էջ 323-340), Արաքս Փաշայանի «Հայկական թեմաները Ծոցի լրատուամիջոցներում. հիմնական միտումներ (2016-2022)» (էջ 341-352), Էլիզ Գևորգյանի «Հայաստանցիները Ծոցի արաբական երկրներում (ԱՄԷ, Քուէյթ, Քաթար, Պահրէյն, Սէուտական Արաբիա)» (էջ 353-364) հոդվածները: Ի դեպ, հեղինակն օգտվել է նույն ժողովածուում հրատարակված Արա.Սայեղի և Շաքե Մանգասարյան-Կրոկընի համատեղ հոդվածից («ԱՄԷ-ի հայօճախին ներկայութիւնը տեղական համացանցին մէջ», էջ 217-240):
3. Աշխատանքում հստակ չի գրված, թե ե՞րբ է հիմնադրվել Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության Արաբական Միացյալ Էմիրությունների, Քատարի և շրջակայից թեմը թեմը: Ի դեպ, աշխատանքի տաբեր էջերում (59, 80, 85, 86) թեմի անվանումը տարբեր կերպ է ներկայացված, հարկ է միօրինականացնել այն կամ համապատասխան բացատրություն տալ:
4. Ուղղագրական և այլ վրիպակներ՝ էջ 24, 28, 31, 33, 38, 41, 45, 46, 47, 49, 54, 59, 65, 77, 80, 81, 85 և այլն, անհաջող ձևակերպումներ: Օրինակ՝ էջ 38-ում «ազգությամբ հայաստանցի», էջ 47-ում պետք է շեշտել, որ 1997 թ. Շարժայի եկեղեցու հիմնարկեքը եղավ, էջ 81-ում պետք է լինի Պետրոս Արսլանյան և այլն:

Մեր կարծիքով, նշված դիտարկումները ամենևին չեն ստվերում կատարված աշխատանքը:

Եզրակացություն

Ատենախոսության արդյունքների հավաստիությունը կասկած չի հարուցում: Այն երաշխավորված է օգտագործված աղբյուրների հարստությամբ, արխիվային վավերագրերի և մասնագիտական գրականության, տեղական ու սփյուռքյան մամուլի նյութերի համադրման մեթոդաբանությամբ: Հեղինակի կողմից հրատարակված 6 գիտական հոդվածները և սեղմագիրը լիովին արտացոլում են ատենախոսության հիմնական բովանդակությունը:

Ելնելով վերոշարադրյալից՝ Շաքե Զավենի Մենկեչյանի «Արաբական Միացեալ Էմիրութիւններու հայ համայնքի հասարակական-քաղաքական կեանքը 1970-ական թուականներէն մինչեւ մեր օրերը» թեմայով ատենախոսությունը լիովին համապատասխանում է ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգով սահմանված պահանջներին, այն գիտական նորույթ է պարունակում, իսկ դրա հեղինակն արժանի է իր հայցած Է.00.01 - «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս՝

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ Համաշխարհային պատմության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Խաչատուր Ստեփանյան

Խ. Ստեփանյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ՀՊՄՀ գիտական քարտուղար՝ մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Հ. Մարգարյան

29.05.2026 թ.